600.0078.18.03.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտի 2020 թվականի №78Ա
քաղ. Երևան

«ԹԵՂՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետը, 10-րդ, 17-րդ, 17.1 հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն որոշումը և հաշվի առնելով «ԹԵՂՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի մարտի 6-ի հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «ԹԵՂՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերության հայտը և Լոռու մարզի Թեղուտ գյուղում շարժական ռադիոկապի ցանցի կազմակերպման համար տրամադրել 150.225ՄՀց և 155.225ՄՀց ռադիոհաճախակա-նությունների օգտագործման թույլտվություն՝ մինչև 2030 թվականի մարտի 19-ը գործողության ժամկետով:
2. Հաստատել «ԹԵՂՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերությանը Լոռու մարզի Թեղուտ գյուղում շարժական ռադիոկապի ցանցի կազմակերպման համար տրամադրվող 150.225ՄՀց և 155.225ՄՀց ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. «ԹԵՂՈՒՏ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ընդունվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում №900005330213 հաշվեհամարով

Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետում նշված թույլտվության տրամադրման վճարի 99 տոկոսը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մարտի 19-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
18 մարտի 2020թ.